Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

18.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝
մասնակցությամբ անդամներ՝

Ի. Բաղմանյանի
Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է քաղաքացիական իրավունք բաժնի 41-րդ հարցը:

Հարց 41

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները Հանձնաժողովը համարում է հիմնավոր այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից:

Նույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Նշվածից հետևում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ այդ թվում ապրանքների բաղադրամասային թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման այդ թվում արտադրողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից,

այնուամենայնիվ նույն օրենգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ եթե վնասի առաջացմանը կամ մեծացմանը նպաստել է տուժողի կոպիտ անզգուշությունը, ապա հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված 2-րդ տարբերակը, այն է՝ վնասի հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից, ևս կարող է համարվել որպես առաջադրված հարցի ճիշտ պատասխան, ուստի Հավակնորդի միավորը ենթակա է վերանայման:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2899 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել.

Քաղաքացիական իրավունք բաժնի 41-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ